

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Հ Ա Ն Դ Ի Ս Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՄԵՐՈՒՆԻ ՄՈՒՐԱՅԻԿ ՄԸ

Ժամանակէ մը 'ի վեր Բարիդու գրւ-
խաւոր եկեղեցեաց մէկուն գրան առջին՝
Յիրունի մուրացիկ աղքատ մը կը տեսնու-
ւէր, որ ամեն օր Հնոսի ու պատառոտուն
զգեստներով նուիրական տաճարին սեմոց
վրայ ողորմութիւն խնդրելու կու գար: Այ-
տարին կերպն ու խօսակցութիւնը յայտնի
կը վկայէին թէ բարձրագոյն կրթութիւն
ունեցած ըլլայ, գերադանց քան ինչ որ
սովորական է այդ թշուառ վիճակին. և
թերեւս ասոր համար իր վիճակացոյց մաս-
նաւոր գթութեանը ու յարգութեանը ար-
ժանացեր էր:

Այս 'ի բախտէն Հայածեալ մարդուն ա-
նունը Յակոբ կը կոչուէր: Իր բարեսիրու-
թիւնը, ողորմութեանց բաժանման ստիժի-
ցուցած անկողմնասիրութիւնը, որ է միակ
բարեբարութիւն աղքատացելոց առ աղ-
քատացեալս, և իր թշուառ ընկերակցաց
մէջ երբեմն ծագած վէճերը Հանդարտելու
եռանդը, սիրելի ըրեր էին զինքը և մաս-
նաւոր մեծարանաց ու յարգութեան ար-

ժանաւոր: Ասկայն իր կեանքն ու աղէտքը
գաղտնիք մ'էին նոյն խակ իր մտերիմ բա-
րեկամացը. ամեն առաւօտ, քսան և Հինգ
տարիէ 'ի վեր կը նստէր մի և նոյն սեղր,
և ոչ ոք կը ճանչնար կամ տեղեկութիւն
ունէր իր վրան:

Բայց իր բախտակից ընկերակցաց ու
մանց աչքը զարկեր էր, որ Յակոբ թէպէտ
ուղղադաւան, այլ եկեղեցին երբէք ոտք չէր
կոխէր: Արօնական եռանդնալից պաշտա-
մանց ատեն, երբ Հաւատացելոց սրտա-
շարժ ձայները կը թնդացնէին նուիրական
տաճարին որմունքը, և երգէոն իր տխրա-
խառն երգերովը կը ներդաշնակցէր քրիս-
տոնէից միաբերան պարերգութեանը, Յա-
կոբ թէ և կը բորբոքէր 'ի ներքուստ աղօ-
թակցել Հաւատացելոց, բայց ընդգիմանա-
լով ներքին ազգեցութեանը՝ կը լռէր, ան-
տարբեր աչօք գիտնելով միայն գրսանց՝
Աստուծոյ տան երկնամասն Հրաշալի տե-
սարանը:

Հարիւրաւոր ջահից և լապտերաց պայ-
ծառութիւնն ու ցլացցուցիչ լոյսը, և ժո-
ղովրդեան խուռն բազմութիւնն երկրպա-
զու բոլորից Արարչին, ակամայ զարմա-
ցումն կը ներգործէին 'ի սիրտ նորա, և
Հնգաբար ջերմ արտասուաց կաթիլներ
կ'իջեցնէին բազմապիսի աղէտիք խորշո-

մեայ երեսացը վրայէն: Մեծ դժբախտութիւն կամ մեծ ապաշաւ մը կարծես կը յուզէին ձերունի մուրացկանին սիրտը:

Քաշանայ մ'ալ կար որ ամեն օր նոյն եկեղեցին կու գար պատարագելու համար, որ բարեփնձակ ընտանեաց սերունդ ըլլալով, իրեն միակ մխթարութիւնն ու երջանկութիւնն էր՝ առատանալ յողորմութիւն. և այս ձերունի մուրացիկը նոյն քաշանային մասնաւոր գթութեանը ու սիրոյն արժանանալով, ամեն օր ողորմութիւն կ'առնուր իրմէ գթալիր խօսքերով. և այն էր զրեթէ ձերունոյն օրական միակ ապրուստը:

Քայց օրին մէկը Յակոբ չի տեսնուիր ըստ սովորութեան եկեղեցւոյն դուռը. և քաշանայն չուզելով կորուսանել իր ամենօրեայ՝ ողորմութեանց արդիւնը, կը փրկուէր: Եւ կը գտնայ մուրացկանին տունը, և ներս մտնելով կը տեսնայ զինքը խեղճ անկողնոյ մը վրայ հիւանդ տարածուած: Կը վարանայ քաշանայն տեսնելով սենեկին մէջ զճոխութիւն և զսեղճութիւն խառն իրարու հետ: Անկողնոյն վրայէն ոսկեայ գեղեցիկ ժամացոյց մը կ'արտաւած էր, և կային պատին վրայ սեւագոյն քողով ծածկելա երկու գեղեցեակգորուած նկարներ. տեսաւ զարձակ փղոսկրէ վայելուչ խաչելութիւն մը նրբաչէն, և թիկնաթռու վրայ հին գրեանց հետ արծաթապատ պատարագամատոյց մը: Իսկ միւս կաշ կարասիքը յետին աղբատութեան երևոյթ կ'ընծայէին:

Քաշանային ներկայութենէն զօրանալով դժբախտ ձերունին, երախտաշնորհ զգացմամբ կը գոչէ. Տէր, ինչպէս արժանի համարեցար ինծի նման եղիկի ու ապերջանիկ անծի մ'այցելութեան գալ: Յակոբ, պատասխանեց քաշանայն, Աստուծոյ պաշտօնեայն պէտք է մխթար ըլլայ անմխթար անկեղց. եկայ իմանալու թէ արդեօք բանի մը պէտք ունիս:

Ասկէց ետքը ալ բանի մը պէտք չունիմ, պատասխանեց մուրացիկը. կը մօտեայ կենաց վերջին վայրիկամբ, և վերջին դատաստանը... Ահա որ եղեռնագործութիւն մը, եղեռնագործութիւն՝ որուն ամբողջ թշուառ կեանքս չի բաւեց 'ի քաւութիւն, առանց յուսոյ քաւութեան կը տանջէ ու կը տառջնապէ գիւ:

Չկայ եղեռն անբաւելի, կը պատասխանէ քաշանայն. Աստուծոյ ողորմութիւնը զօրաւորագոյն է քան զամենայն մարդկային ինչ և է ապիրատութիւն:

Քայց ավաւոր յանգանք արարտաւորեալ անձ մը, կ'ըսէ մուրացկանը, ինչ բանի կըր-

նայ անկալութիւն ունենալ: Ոչ, ոչ. ինծի համար այլ ևս թողութիւն չկայ:

Այժմ, գոչեց քաշանայն եռանդեամբ, այդ կայ թողութեան ու քաւութեան միջոց մը՝ որուն վրայ երկբայեքը ծանրագոյն յանցանք է քան ինչ և է մարդկային յանցաւորութիւն: Կրօնքը, իբրեւ գթալիր մայր՝ կը տարածէ ողորմութեան բազուկը, ընդունելու զապաշխարողս 'ի ծոց իւր: Թէ որ անկեղճ է ապաշխարութիւնդ, մի վախեր, խնդրէ Աստուծոյ ողորմութիւնը, և կը տեսնաս որ զքեզ ձեռքէ չի թողուր:

Ասիկա ըսելէն ետքը՝ կը նստի լսելու մուրացկանին, որ այսպէս կը սկսի իր խոստովանութիւնը. Ես խեղճ գործաւորի որդի մ'ըլլալով, Քաղղիոյ ազնուատուհմ ընտանեաց մը սիրոյն արժանացայ: Հայրս պզտիկալուած մը կը մշակէր, զոր նոյն ընտանիքը տուեր էր իրեն 'ի վարձու, և 'ի մանկութենէ սնայ նոյն ընտանեաց զգեկին մէջ: Ի սկզբանէ 'ի վեր ուսմանս ալ էի սենեկապան ըլլալ որ մ'իրենց միածին որդւոյն. բայց ըստի որ աստիարակութիւն մը, և ուսմանց մէջ մեծաքայլ յառաջագիմութիւնս, և մանաւանդ նոյն ընտանեաց առիտ ունեցած սերը բարձրացուց զիս յաստիճան գրագրութեան: Քսան տարուան էի, երբ զրգեցեալ 1789 տարւոյն յեղափոխութիւնը, և ես անխորհրդաբար՝ երիտասարդական աշխուժիւ, սկսայ մէկէն ժամանակին լրագրաց կարծեացը հաւանիլ և հետեւել կուրօրէն:

Ասկայն չի գիտնալով ինչ որոշում ընել, միտքս զրի դառնալ տնայնագործութեան իմ ծնունդս, և թողուլ հարուստ գղեւհին ապաւէն երիտասարդութեանս: Ահ, թէ որ կատարած ըլլայի այդ որոշումները, ապերախտութեան գործով՝ ահաւոր եղեռնաւ առջէն առած կ'ըլլայի: Յեղափոխութեան շուրջը լսուցաւ մէկէն 'ի գաւառս, և տեսարս վախնալով որ չըլլայ թէ արգիլուին իրենց զղկկին մէջ, արձակեցին բոլոր ծառայքը, 'ի գրան՝ փոխնցին իրենց ստացուածոց մէկ բանին, և մէկտեղ առնելով տանը կարասեաց մէջէն քանի մը մեծագին նիւթեր՝ իբրեւ յիշատակ ընտանեաց, Բարիզ եկան՝ ապաւէն փնտռելու ժողովրդեան ամբոխին մէջ, և անդորրութիւն 'ի լուրսեան և 'ի մթութեան:

Ես իբրեւ իրենց սիրելին, ետեւեմբնէն գացի: Երկիրդն ամեն կողմ տիրեր էր, բայց ոչ որ գիտէր տերանցս ուր ըլլալը և թաքնութեան խորհուրդը. գաղթեցրց ցուցակին մէջ արձանագործելով անունին, ամեն ունեցածնիս յարգունիս գրաւուեցաւ. բայց իրենք այս բանիս ամենեկին

փոյթ չէին բներ: Սմննու անձանօթ և ամիտփեսայք 'ի մի ընտանեկան խաղաղութիւն, անդորր կեանք մը կը վարէին՝ ըստ ներելոյ Հնգգամանաց ժամանակին: Կրնեք բոլոր յոյսը Կախախնամութեան վրայ դրեր էին և կը սպասէին երջանիկ օրերու: Միակ անձ մը՝ որ կրնար մատնել զիրենք և յայտնել իրենց բնակութենէն, յափշտակել տալով զիրենք անդ որբաւէտ ապաստանարանէն, չխրդճեց վատութեամբ գործել զայն. և ահա ես եմ այն մատնիչն ու անխրդճ անձը...:

Հայր, մայր, չորս զստերք, զարդաբեղք գեղեցկութեամբ և անմեղութեամբ և պզտի տղայ մը տասնամեայ, ձգուեցան ահաւոր բանին մը խորը, դատապարտեալ տանել ամենայն աղետից բանտարգելութեան: Դատաստանը մէկէն եղաւ. վասն զի այնպիսի ժամանակ, նոյն իսկ թեթեւ պատճառանք՝ բաւական էին 'ի մահ դատապարտել զանապարտն: Սակայն դատաւորը կը դժուարէր գտնել Հայածանաց պատճառ մ'այն անմեղ և աղուական ընտանեաց գէմ: Մարդ մը միայն եղաւ՝ որ տեղեակ ըլլալով ամեն ներքին զաղտնեաց, ջանաց նոյն անմեղ անձանց ամենաչնչին գործերն իսկ կասկածաւոր ցուցնել դատաւորին. և ահա ես եղայ այս զրպարտիչը: Վճիռը տրուեցաւ, և 'ի մահ դատապարտեցաւ այն տարաբախտ ընտանիքը, 'ի բաց առեալ տասնամեայ տղան, որ որբացեալ 'ի ծնողաց՝ պիտի լար զանոնք մինչև ցմա՛հ, և անխիճ իր ընտանեաց աւանդորդն դա՛հիճը՝ իր տարաբախտ և անմխիթար օրերուն մէջ:

Համակամբ, ջնախով մխիթարութիւն մը գտնել յառաքինութեան, վեց անպարտողականեղբ՝ կը սպասէին Հանգարատութեամբ բանտին մէջ իրենց կենաց վերջի օրուան արշալուտոյն: Ակամայ մուացութիւն մը կը յապաղէր իրենց մահաբեր վճռոյն կատարումը: Սակամանակ օրը ծագեցաւ. և յիշարի եթէ չըլլար իրենց կորստեան Հետամուտ մը, անշուշտ այն անմեղ արարածքն կը վրիպէին գահճին տապարէն: Բայց անիրաւութեան աւարտն Հարստանալու անհամբեր մարդ էր, յեղափոխական ատեանը կը վազէ, կ'ուզէ վրիպակը և Հրաման Հանել կու տայ լրումն տալ զլիսապարտ վճռոյն. և նոյն իրիկունը կը կատարի գործը: Իսկ այս անհամբեր մարդը, այս եղեռնագործը թու ալաց աղբին է: Եւ եթէ Հարցնես որ այնպիսի եղեռան մը գինը ինչ եղաւ. երեք Հազար ֆրանքաց գումար մը, և այն ամենայն դրամոյ առարկայքն որ կը տեսնաս աննեկին մէջ:

Այսպիսի անուր ապիրատութիւն մը գործելէս ետքը, կը ջնայի արձակ կենօք մուտնայ անոր յիշատակն ու ջնջել մտաց մէջէն: Ոսկին՝ պտուղ վատախորտ չարութեանս, քիչ ժամանակ տուեց, և Հաղի թէ սպառեցաւ, սատարի խղճմտանաց խայթ մը սկսաւ տանջել զիս: Ոչ մի առաջարկութիւն, ոչ մի ձեռնարկութիւն և ոչ մի աշխատութիւն յաջող ելէ 'կունենային բռնաւ: Ալքբասացայ և Հիւանդացայ. և յետին աստիճանի կարօտ աւուրն պարենի, Հատարակաց դժուրութիւնն ապաստանարան մը շնորհեց ինձ եկեղեցւոյ մը սեմոց վրայ, ուր անցուցի այնքան տարի: Եղեռան յիշատակութիւնն այնպէս կը խռովէր զիս, որ երբէք չէի Համարձակեր ոտք կոխել Աստուծոյ տունը, վախճալով իր իրաւադատ ցասմանէն ու արդարաւիժութեամբ խնջրութեանէն:

Ընդունած ողորմութեամբ կրցայ 'ի բաց զնե՛ գողցած գումարս: Մեծագին առարկայքն որ կը տեսնաս Հօս, ժամացոյցն, խաչելութիւնն, պատարագամատոյցն և երկու քողարկեալ նկարքն՝ այն անմեղաց ստացուածք են: Ո՛հ, ինչպէս երկար առտն տագնապեցայ 'ի խայթից խղճմտանաց. կրնամ արդեօք յուսալ ներումն ընդունել Աստուծոյն...:

Յակոբ, կը պատասխանէ քահանայն, եղեռն մեծ է, և պարագայքն անագորոյն թէ որ ամբողջ կեանքդ արտասուօք անցընէիր, անբաւական էր 'ի քաւութիւն այդպիսի եղեռանս: Բայց աստուծոյն ողորմութեան գանձը մեծ է. ուստի ճշմարիտ զղջմամբ և Աստուծոյ անյիշարար մարգարէութեամբը՝ կրնաս արդարանալ ու ներումն ընդունել:

Եւ այսպէս ըսելով ոտք կ'ելլայ, և մուրացիկն որպէս թէ նոր գորութիւն զգեցած՝ կը ծնրագրէ: Բայց այն վայրկեանին որ քահանայն արձակման խորհուրդը պիտի կատարէր, ծերունին կը գոչէ յանկարծակի: Կեցիր, ներումն ընդունելէս առաջ կ'ուզեմ՝ Հեռացնել ինձմէ այն ամեն բաներն որ արդիւնք են եղեռնագործութեանս: Ահաւասիկ ոսկին, առ բոլոր Հօս եղած առարկայքը, պատարագամատոյցն ու ժամացոյցը, ծախէ և տուր աղքատաց: Եւ ապա 'ի բաց առնելով այն քողն որ կը ծածկէր նկարքը, կ'ըսէ՝ Ահաւասիկ պատկերը դժբախտ տերանցս:

Քահանայն յանկարծ տեսնելով իր ծնողացը պատկերքը, կը գոչէ ցաւօք սրտի. Ո՛վ Հայր իմ, ո՛վ մայր իմ. և մէկէն միտքը գալով ահաւոր եղեռան յիշատակը, և եղեռնագործին ու առարկայից ներկայու-

թիւնը, թակացեալ կ'ընկնայ թիկնաթոռին վրայ, և ախովք երեսը ծածկելով՝ կը հեղու ողորմ՝ և դառն արտասուաց հեղեղ մը, իսկ մուրացիկ ծերունին ահաբեկեալ՝ չհամարձակելով վերցնել աչքերն իր զուհից որդւոյն և եղբօրը վրայ, որուն վրէժ-խնդրութեանը կը սպասէր անկէ ետքը քան ներսողութեանը, կ'ընկնայ քահանային ոտքը, կը թանայ ջերմ արտասուօք, ըսելով յուսահատ ձայնիւ. Ո՛վ տէրդ իմ, ո՛վ գծաբխտ տէր... Այո, աւագակ եմ, հրէշ եմ և ոճրագործ. պատրաստ եմ հպատակել կամացդ, վրէժ խնդրէ ծնողացդ և եղբարցդ:

Վրէժ խնդրել կը գոչէ քահանայն, սթափելով ի ցաւոցն. վրէժ խնդրել և ունի հար լինել թշուառացիոյն՝ որ արդէն տագնապեալ կը տանջի ի իղձէ մտացն:

Իրաւունք ունէի, կը կրկնէ մուրացիկը, իրաւունք ունէի երբ կ'ըսէի թէ ապիրատութիւնս ներողութեան անարժան է: Լաւ գիտէի որ նոյն իսկ կրօնքը պիտի մերժէր զիս ի գրկաց իւրոց, ինծի նման անծիմը զղտման անգոր է, և... բոլոր պատիժը գծոխոց անբաւականք են ի հատուցումն պարտեաց իմոց, որուն ծանրութիւնը լաւ ըմբռնած եմ:

Այս վերջին սրտատոցոր խօսքերը կը յիշեցնեն քահանային իր պարտքը. և մէկէն կը դադրի որդիական ցաւոց և քահանայական պաշտաման մէջ եղած կոխը: Մարդկային տկարութիւնն արտասուել տուաւ որդւոյն առ վայր մի իր ծնողքը, բայց կրօնքը զօրացուց մէկէն զինքը: Քահանայն կ'առնու խաչելութիւնը, հայրենի ստացուածք՝ որ ընկեր էր նոյն եղենաճգործին ձեռքը, և ողորմ ու գորովագութ ձայնիւ կ'ըսէ.

Ո՛վ քրիստոնեայ դու. անկեղծ է զրդւումդ... Շատ լաւ... Աստուած կը ներէ քեզ իր պաշտօնէին ձեռքովը: Եւ մէկ ձեռքը ծերունի մուրացիկանին զլսին վրայ դնելով և միւսովը բռնելով խաչելութիւնը, կ'իջնէ Սասունոյ ողորմութիւնն իր ընտանեաց մատերչին վրայ:

Մուրացիկն երեսն ի վար խոնարհած, անշարժ կեցեր էր քահանային ոտքը: Արձակմանէն ետքը քահանային երկընցուց ձեռքը ի վեր ամբառնալու համար զինքը... բայց եղկկին ներկայացեր էր արդէն Աստուծոյ դատաստանին առջև:

ՔՐԺԵՆ ՏԻԿԵՈՁ

ԱՔՍՈՐԱԿԱՆԱՅՆ Ի ՍԻՊԵՐԻԱ

ՎԼՊԻ 1

Մերձեկայր գիշերն, զայրանայր ցուրտն, յայգութ և հետէ չէր ինչ օրիորդին առեալ կերակուր, և չգիտէր զինչ առնել: Նկատէր զղէմն ամենեցուն՝ թէ իցէ՝ ինչ յուսալ յուսիքէ ողորմութիւն. այլ ոչ ոք յայնչ ցանկէ՝ յորս պաշտեալ հայեր առ կարօտութեան, դառնայր հայել յինքն՝ անկարօտ ինքեան: Փորձէր բաղիւն զգրուան յոռեգոյն իջլանաց, և ամենայն ուստեք մերժէր ի բաց. զի յոյս առաւելագոյն չահից յաւուրս հանդիսին՝ փակէր զգուրմ աղբաւտագունիցն իսկ ի պանդոկակաւտաց. զի ուր հասանէ ումեք ճոխանալ, առաւել կծկէ գծուէն ի տալոյ: Դարձաւ նկն նստաւ առ մեծի խարուկին ի Կրեմլեան հրապարակի. լայր լռելեայն՝ թաղեմալ տրտմութեամբ, և ոչ կարէր ճաշակել զպատառ իսկ հացին՝ զոր պառաւոյ ուրուք տուեալ էր նմա կարեկցաբար: Յայն թշուառութիւն տեսանէր զանձն հասեալ՝ զի հարկաւորէր ալ կարակաւել անցաւորաց ի մոյր, որոց մարթ էր տալ նմա զոյղն ինչ ողորմութիւն, թէպէտ և անկարեկիր՝ այլ գէթ առանց մերժելոյ զնա արհամարհանօք: Զգացումն ազնուականութեան արգելոյր զնա ի մուրանալոյ, այլ ստիպէր ի ցրտանք բռնութենէ, որով վտանգէին կեանք իւր՝ զոր ոչ իւր համարէր, կալով զյայգ ի բացի: Վասն որոյ ի բաց եղեալ զազնուախուհութիւն, զմի ի ձեռաց ամենալ զերեսօք, և կարկառեալ զմիւսն առ որ նախ ընդ այն անցանէր, տէէ. Առ սէր հօր քո՝ որ սիրէն զքեզ, առ սէր մօր քո՝ որ ծնան զքեզ, տուր ինձ գտանել խշտեակ ի գիշերիս: Այրն, յորմէ խնդրէր ողորմութիւն, ի նշող խարուկին գնեալ զղէմն նորալ ասէ. Ի յոռի արուեստ ձեռն արկեալ է քո, դուստր. չկարիցես վաստակել. ի քում յայգմ հասակի պարտ է չահել զկեանս. մուրացիկք անհաճոյ են ինձ. Տէր տացէ քեզ, Սասն, և ի բաց էանք:

Եղկկի օրիորդին ամբարձեալ զույս ի վեր՝ որպէս թէ յերկնից խնդրելով օգնութիւն և քաջայերեալ ի խրախոյս զոր զգաց ի սրտի, համարձակեցաւ խնդրել և յայլոց անցաւորաց: Կէսք անցին գնացին ան-